

Գեր. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան

Գեր. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան ծնած է 17 Մարտ 1934ին, Միացեալ Նահանգաց Ռօտ Այլլընտ Նահանգի Բրավիլտէնս քաղաքին մէջ

Իր ուսումը ստանալէ յետոյ Ամերիկեան Հանրային Վարժարանի մէջ, եւ մասնակցելով Բրավիլտէնս քաղաքի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դասի եւ երիտասարդաց Կազմակերպութեանց գործունէութեանց, երիտասարդ եւ ամերիկածին Սարգիս Պաղտասեան երուսաղէմ կու գայ 1955ին, աշակերտելով Ընծայարանի դասընթացին:

1959ին կը ձեռնադրուի վարդապետ, ձեռամբ Գեր. Տ. Սուրեն Արք. Քէմհանեանի: Պաշտօններ կը վարէ վանքին մէջ իբրեւ ուսուցիչ, Աւագ Թարգման, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Տեսուչ: Կը նշանակուի Կալուածոց Տեսուչ՝ Իսրայէլի կողմը գտնուող վանքապատկան կալուածներու, եւ Պատրիարքական Փոխանորդ: Բարեկրօն-գումներ կը կատարէ Նափայի Ս. Նիկողայոս վանքի, Հայֆայի Ս, Եղիա մատուռի, եւ Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, հովուական եւ կրթական պաշտօններ եւս ստանձնելով:

Յուսիկ վարդապետ ընկերացած է հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանին, այցելելով Վատիկան, Պօղոս Զ. Պապին, Հայաստան՝ Եղեռնի 50 ամեակին առիթով, եւ Եկեղեցեաց Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնը, ժընէվ:

Միացեալ Նահանգներ վերադառնալով 1969ին, Արեւելեան Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան զինք կը նշանակէ Հոգեւոր Հովիւ Նիւ Ճըրզիի Լիվինկսթըն քաղաքի Ս. Աստուածածին Եկեղեցիին, ուր ծառայեց աւելի քան քսան տարիներ: Հետեւեցաւ Սիթըն Հօլ համալսարանի դասընթացներուն: Արեւելեան Թեմին մէջ ծառայեց նաեւ իբրեւ Առաջնորդի Փոխանորդ եւ Տնտեսական Ցանձնախումբի Ատենապետ: Կազմակերպեց իրեն վստահուած համայնքին կրթական, մշակութային, ընկերային եւ կրօնական գործունէութիւնը:

1990ին Սրբոց Յակոբեանց Միաբանական Ժողովը Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանը ընտրեց անդամ Տնօրէն Ժողովի: Նշանակուեցաւ Կալուածոց Տեսուչ: Իսկ 1992 Սեպտեմբեր 27ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Եպիսկոպոս օծուեցաւ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսին, օծակից ունենալով Տ. Տարօն Եպս. Ճէրէնեան, Տ. Գարեգին Եպս. Պէֆնեան եւ Տ. Վիգէն Եպս. Այֆագեան: Գեր. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան Նոյեմբեր 30ին Ս. Աթոռ վերադարձաւ իր Միաբանական պարտաւորութիւններուն:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ, Դեկտեմբեր 6ին բարի-գալուստի հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ Պատրիարքարանի մէջ, միաբանակից եղբայրներու մասնակցութեամբ: